ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԷՔՍՏԵՌՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Սիրելի՛ աշակերտ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքը: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:
Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Ցանկանում ենք հաջողություն:

1 **Նշվածներից ո՞րն է մակրոտարր:**

1) ոսկին
2) թթվածինը
3) արծաթը
4) սնդիկը

2 **Ո՞ր նուկլեինաթթուներն են սպիտակուցի կառուցվածքի մասին տեղեկատվությունը տեղափոխում սպիտակուցների սինթեզի վայրը:**

1) ի-ՌՆԹ
2) ռ-ՌՆԹ
3) փ-ՌՆԹ և ռ-ՌՆԹ
4) ԴՆԹ և ռ-ՌՆԹ

3 **Ո՞ր օրգանիզմներն են ավտոտրոֆ:**

1) քեմոսինթեզող բակտերիաները
2) սնկերը և նախակենդանիները
3) խոտակեր կենդանիները
4) գիշատիչ կենդանիները

4 **Որո՞նք են նախակորիզավորներ:**

1) սնկերը
2) ծածկասերմերը
3) բակտերիաները
4) նախակենդանիները

5 **Բջջում որտե՞ղ են առաջանում լիզոսոմները:**

1) կորիզակում
2) ռիբոսոմներում
3) Գոլջիի ապարատում (համալիրում)
4) բջջային կենտրոնում

6 **Կորիզավոր բջջում որտե՞ղ է իրականանում ԱԵՖ-ի սինթեզը:**

1) բջջակորիզում
2) ռիբոսոմներում
3) միտոքոնդրիումներում
4) կորիզակում

7 **Միտոզի ո՞ր փուլում է անհետանում կորիզաթաղանթը:**

1) անաֆազում
2) պրոֆազում
3) մետաֆազում
4) թելոֆազում

8 **Նշվածներից ո՞րն է սեռական բազմացման տարբերակ:**

1) բողբոջում
2) կուսածնություն
3) սպորառաջացում
4) վեգետատիվ բազմացում

9 **Ի՞նչ հաջորդական փուլերով է ընթանում միջատների թերի կերպարանափոխությամբ զարգացումը**:

1) հասուն ձև, ձու, հարսնյակ, թրթուր
2) հասուն ձև, թրթուր, ձու, հարսնյակ
3) ձու, թրթուր, հասուն ձև
4) ձու, հարսնյակ, թրթուր

10 **Ի՞նչ է փոփոխականությունը:**

1) ծնողական օրգանիզմների՝ իրենց հատկանիշները և զարգացման առանձնահատկությունները հաջորդ սերնդին փոխանցելու հատկությունը
2) օրգանիզմների անհատական զարգացման ընթացքում նոր հատկանիշներ ձեռք բերելու հատկությունը
3) յուրաքանչյուր օրգանիզմի բոլոր գեների ամբողջությունը
4) օրգանիզմի բոլոր հատկանիշների ամբողջությունը

11 **Ինչպե՞ս է Գ.Մենդելն անվանել հատկանիշի այն դրսևորումը կամ հատկանիշը, որն արտաքուստ անհետանում էր:**

1) ռեցեսիվ
2) դոմինանտ
3) հոմոզիգոտ
4) հետերոզիգոտ

12 **Մարդու ո՞ր հիվանդությանն է բնորոշ արյան ցածր մակարդելիությունը:**

1) դալտոնիզմ
2) Դաունի հիվանդություն
3) հեմոֆիլիա
4) բրախիդակտիլիա

13 **Մարդու ո՞ր հատկանիշը ընդհանրապես կախված չի արտաքին պայմանների ազդեցությունից:**

1) արյան խումբը
2) մարմնի զանգվածը
3) աշխատանքային հմտությունները
4) ֆիզիկական պատրաստվածությունը

14 **Ի՞նչ է բնորոշ գենային մուտացիաներին:**

1) քրոմոսոմների կառուցվածքի փոփոխումը
2) քրոմոսոմների հապլոիդ հավաքակազմի ոչ բազմապատիկ փոփոխումը
3) ԴՆԹ-ում մեկ նուկլեոտիդի փոփոխումը
4) քրոմոսոմների հապլոիդ հավաքակազմի բազմապատիկ փոփոխումը

15 **Ի՞նչն է բնորոշ կայունացնող բնական ընտրությանը:**

1) հանգեցնում է ֆենոտիպի աստիճանական փոփոխման
2) հանգեցնում է գենոտիպի աստիճանական փոփոխման
3) գործում է միջավայրի համեմատաբար հաստատուն պայմաններում
4) միջավայրի փոփոխվող պայմաններում նպաստում է տեսակների փոփոխմանը

16 **Ո՞րն է տեսակի պարզագույն կառուցվածքը:**

1) պոպուլյացիան
2) դասը
3) կարգը
4) տիպը

17 **Ո՞րն է իդիոադապտացիայի օրինակ:**

1) տաքարյունության առաջացումը
2) փղի կնճիթի առաջացումը
3) ողնաշարի առաջացումը
4) քորդայի առաջացումը

18 **Ո՞րն է կենսածին էկոլոգիական գործոն:**

1) քամին
2) գիշատչությունը
3) միջավայրի թթվայնությունը
4) միջավայրի խոնավությունը

19 ***Մորեխների թվաքանակի բռնկումների դեպքում ավելի քիչ սնունդ է հասնում այծերին:***
Օրգանիզմների միջև գոյություն ունեցող ո՞ր փոխհարաբերությանն է համապատասխանում վերոնշյալ օրինակը:

1) սիմբիոզին
2) չեզոքությանը
3) մրցակցությանը
4) գիշատչությանը

20 **Ո՞րն է կոնսումենտ:**

1) քեմոսինթեզող բակտերիան
2) կապտականաչ ջրիմուռը
3) մակաբույծ որդը
4) կանաչ բույսը